

ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

Ա.

ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ ՎԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ

Հայրապետական տնօրէնութիւնք.

Կոնդակ յանուն Առաջնորդի հայոց Ն. Նախիջևանի և Բեսարաբիոյ, որով պատուիրեցաւ յղել յանուն Դիւանիս զառոճիկ տ. Յուսիկ վարդապետի վասն յուշիս և օգոստոս ամսոց։ Թ. 931.

— Յանուն տ. Եղիշէ Ծ. վարդապետի Մուրադեան, որով պատուիրեցաւ ընդ տ. Արտակ և տ. Զաւէն վարդապետաց գնալ ի ս. Խաչ վանս Արգեազու և ժողովել զարդիւնս ուխտին։ Թ. 933.

— Յանուն Հոգ. Կառավարութեան Հին Նախիջևանի, որով պատուիրեցաւ զվարելահողս վանուցն ս. Նախավկայի Դարաշամբայ, որ յԱստաբատ, թողուլ ի վերայ եղբօր նախկին կապալառուի հանգուցեալ Սարգսի Առաքելեան։ Թ. 936.

— Յանուն Առաջնորդի Թեմին հայոց Վրաստ. և Իմերէթի, որով պատուիրեցաւ յայտնել տ. Տիրայր վարդապետի վերադառնալ ի Մ։ Աթոռս։ Թ. 940.

— Ցանուն Ամեն. Պատրիարքի հայոց Թուրքիոյ, ընդ որում յղեցաւ ի տնօրէնութիւն նորին զպատճէն խնդրոյ զմիւռնիացի տիկին Սոփիայի Ղաւճեան վասն ամուսնալուծութեան նորա։ Թ. 951.

— Ցանուն Առաջնորդի հայոց թեմին Ն. Նախիջեւանի և Բեսսարաբիոյ, ընդ որում վերադարձուցաւ գործ պսակալուծութեան տաճկահպատակ Յովհաննիսի Վարդանեան՝ զպսակն թողլով անլուծանելի։ Թ. 958.

— Ցանուն Առաջնորդի թեմին հայոց Վրաստ. և Իմերէթի, որով պատուիրեցաւ տալ վկայագիր ուսուցչութեան կրօնի և հայոց լեզուի Տիգրանայ Մելիք Ստեփաննոսեան՝ նախկին սանու Հոգ. Ճեմարանի Մ. Աթոռոյ։ Թ. 962.

— Ցանուն Փոխանորդի վիճակին Կարուց, որով արտօնեցաւ վերածել զմեծ շինութիւն նորոյ Ցաջորդարանին յաղօթատան մինչ ցշինութիւն նորոգ մայր եկեղեցւոյ։ Թ. 969.

— Ցանուն պ. Տեսչի Հոգևոր Ճեմարանի Մ. Աթոռոյ, որով պատուիրեցաւ հրաւիրել զՆերսէս սարկաւագն յուսուցիչ կրօնական առարկայից։ Թ. 998.

— Ցանուն վիճ. Կոնսիստ. հայոց Վրաստ. և Իմերէթի, որով լուծեցաւ պսակն տրապիզոնցի Վարդուհւոյ Պապինեան ընդ առն Յակոբայ Ենովքեան, զրկելով զայրն յիրաւանց վերստին ամուսնութեան և արտօնելով կնոջն իրաւունս նորոյ ամուսնութեան։ Թ. 1017.

— Ցանուն Նախագահի և անդամոց Եկեղ. Հնագիտակ. Թանգարանին Ղուկասեանց, որով յայտնեցաւ կարգումն պ. Արշակայ Սարգսեան Բաբեանց յանդամ Թանգարանին։ Թ. 1044.

— Ցանուն պ. Արշակայ Սարգսեան Բաբեանց, որով կարգեցաւ յանդամ յիշեալ Թանգարանին։ Թ. 1046.

Բ.

Հայրապետական շնորհակալիք եւ օրհնութիւնք.

Կոնդակ յանուն պ. Բաղդասարայ Արզումանեան յաղագս պահպանութեան նորա «Արզումանեան» ուսումնարանին ի Շաւարին ի Պարսկաստան։ Թ. 996.

— Ցանուն պ. Սարգսի Տէր Յովհաննիսեան ուղղութեալեցւոյ վասն նուիրաբերութեան նորա եկեղեցւոյ գեղջն։ Թ. 996.

— Ցանուն պ. Կարապետի Յարութիւնեան Եղեանց վասն կատարման յիսնամեայ Յոբելինի բազմարդիւն գործունէութեան նորին։ Թ. 1051.

Գ.

Հայրապետական պարգեւք.

Կոնդակ յանուն Միքայէլ քահանայի Տ. Գրիգորեան Ապրակունիս գեղջ, որով շնորհեցաւ լանջախաչ քահանայական։ Թ. 1028.

ԲԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Սեպտեմբերի 1-ին Սինոդը կարճեց Առաքել քահանայ Տէր Առաքելեանի դէմ սկսուած քրէական հետամտութիւնը Ամենաողորմած հրովարտակի համաձայն, իսկ Արտաւազդ Տէր Յակոբեանի և Վիրգինէ Էհրամճեանի պսակը վաւերական կամ անվաւէր ճանաչելու համար որոշեց խնդրել Վեհափառ Հայրապետից, որ տաճկահայոց հոգևոր իշխանութիւնից պահանջուի հարկաւոր տեղեկութիւններ, թէ